

«ԶԻ ԹԻ ԲԻ ԹԱՈՒԵՐ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս
53/10 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի
կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատվիրատու՝ «ԶԻ ԹԻ ԲԻ ԹԱՈՒԵՐ» ՍՊԸ
տնօրեն՝

«Ակունք-Ֆրամ» ՍՊԸ
տնօրեն



Հ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Երևան - 2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ _____	3
2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ _____	5
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	8
3.1. ՏԱՐԱԾՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ _____	8
3.2. ՏԵՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱԲԱՆԱ-ԼԻԹՈՂՈԳԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ _____	10
3.3. ԿԼԻՄԱՆ _____	12
3.4. ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՄՄԻԿ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ _____	15
3.5. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ _____	15
3.6. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ _____	18
3.7. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ _____	20
3.8. ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ _____	20
3.9. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ _____	21
3.10. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ _____	23
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	25
4.3. ԿԱՌՈՒՅՑԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ _____	29
4.4. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ _____	30
4.5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ _____	30
<i>Շինտեխնիկա</i> _____	31
5. ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ _____	34
6. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ _____	35
7. ԿԱՆԱԶՄՊԱՏՈՒՄ _____	37
8. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ _____	37
8.1. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	37
8.2. Ջրային ռեսուրսներ _____	38
8.3. Օդի աղտոտում _____	42
Հողային և էռակցման աշխատանքներ _____	43
8.3.1 Մթնոլորտի աղտոտվածության սպասվելիք մակարդակները շինարարության ժամանակահատվածում _____	47
8.3.2. Արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկ 47	
8.3.3. Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ _____	49
9. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ _____	49
9.1 Թրթռում _____	51
10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	52
11. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ և ՀՐՇԵՋ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ _____	53
12. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 54	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	57

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախատեսվող գործունեություն	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 53/10 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում
Նպատակը	Բնակելի շենքի կառուցում
Նախագծի պատվիրատու	«ՋԻ ԹԻ ԲԻ ԹԱՈՒԵՐ» ՍՊԸ
Կառուցապատողներ	«ՋԻ ԹԻ ԲԻ ԹԱՈՒԵՐ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Պոռչյան 12
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	gor.mikayelyan@gtbkomitas.com Հեռ; 055 51 50 01
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 53/10 հասցեում, շուկայի տարածք
Կառուցապատվող հողամասի մակերեսը	4380մ ² կամ 0,438 հա
Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցապատման մակերես	- կառուցապատման մակերես – 1351 մ ² /30,8 %/ - կանաչապատման մակերես – 1765 մ ² /40,3 %/ - ճանապարհներ և բարեկարգում – 1264մ ² /28,9 %/

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«ՋԻ ԹԻ ԲԻ ԹԱՈՒԵՐ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023), ինչպես նաև այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Կառուցապատման ընդհանուր տարածքը կազմում է 4380մ² կամ 0,438 հա, կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0214-0292, 01-003-0214-0286 (վկայականը տես՝ Հավելվածում):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն) հոդված 12-ի կետ 8-ի, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 53/10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցումը ենթակա է բնապահպանական փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի վերգետնյա մակերեսը և բոլոր հարկերի մակերեսը ներառյալ ստորգետնյան՝ գերազանցում է 15 000 մ²-ին. նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն հաշվետվության մեջ: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Հաշվետվության մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության վերաբերյալ հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
- տարածքի նկատմամբ սեփականության վկայանք,
- Նախագծային փաստաթղթերը,
- տարածաշրջանի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները:

2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (2023թ. մայիսի 03, ՀՕ-150-Ն) – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական 5 աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքը (ՀՕ-211, 27.11.2006թ) - Սահմանում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«ՀՀ Հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության

իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:

ՀՀ կառավարության 29. հունվարի.2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:

ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1396-Ն որոշում:

ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:

ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ «ՆՈՐ ԿԱՌՈՒՅՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՆՈՐՈԳՎՈՂ) ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N426-Ն որոշում:

ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2014թ. <<Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին>> N781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 2018 թվականի փոտրվարի 8 <<ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N108-Ն որոշում»

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. ՏԱՐԱԾՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված է ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան գետի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրագուրկ կիսաանապատային գոտում, ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տարածքը Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի հարաբերական խոնավությունը, որը ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ աննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավագոր, կավավազային, կմախքային զանգվածների

մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ռոռզման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ռոռզելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:



Նկ. 1 Արաբկիր վարչական շրջանի տեղադիրք

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը, որոնք հյուսիսից հարավ հարում են Հրազդան գետի զառիթափ լանջերին: Նախագծվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հոդմնահարված, երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ: Նախագծվող տարածքը ներկայացված է վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերով՝ բազալտներով, որոնց ծածկում են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ:

Հիդրոէրկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տեղամասում մինչև 40մ խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել, ըստ ֆոնդային տվյալների դրանք գտնվում են 70մետրից խորը հորիզոններում:

Ստորերկրյա ջրերը բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Արաբկիր համայնքի տարածքի հիդրոէրկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Ֆիզիկաէրկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տարածքում բացակայում են:

3.2. ՏԵՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱԲԱՆԱ-ԼԻԹՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տարածքում իրականացվել են ինժեներա-երկրաբանական աշխատանքներ հորատման եղանակով:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և ֆոնդային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտերից վերնից-ներքև:

Շերտ-1 Մանրախճա-Խճավազային գրունտ շագանակագույն, կավավազային լցոնի մինչև 15-20% պարունակությամբ, տեղ-տեղ բազալտի բեկորներով: Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության համաձայն (13) IV կարգ է:

Շերտ-2 Բազալտներ ամուր, մոխրագույն, տեղ-տեղ վարդագույն երանգի, տեղ-տեղ բեկորային անջատումներով, ծակոտկեն և խոռոչավոր, խճաքարային նստվածների պարունակությամբ: Շերտում լցանյութը ավազակավային է 10-15%: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն (20^բ) VIII կարգ է:

Շերտ-3 Խճաքարային նստվածքներ կարմրավուն և մոխրագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազակավային կառուցվածքի, խարամացված բազալտի, բազալտի բեկորների պարունակությամբ: Չորրորդական հասակի առաջացումներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն (12) V կարգ է:



Նկ. 2. Տեղանքի իրադրային քարտեզ

3.3. ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը -20.6°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+41.9^{\circ}\text{C}$: Տարեկան տեղումների քանակը 354 մմ: Տվյալները ներկայացված են Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024 տվյալների համաձայն:

Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լուսավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով:

Աղյուսակ 3.3.1 Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	1113	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

Աղյուսակ 3.3.2 Օդի հարաբերական խոնավությունը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, Մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արաբկիր	1113	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	68	37

Աղյուսակ 3.3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով


Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27			
Արաբկիր	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	354	50	53
													48		

Աղյուսակ 3.3.4. Քամու պարամետրերը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ - արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					25	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արաբկիր	889.8	Հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	1.9	28	22	24	26
			1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9							
		Ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1					
			3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5							
		Հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4					
			6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6							
		Հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8					
			2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0							

3.4. ՏԱՐԱԾՔԻ ՄԵՑՄՄԻՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երևան քաղաքի տարածքում, գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ 20.04-04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն, նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:




Նկ. 3. Սեյսմիկ գոտիների քարտեզ



3.5. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:


Ըստ 2023 թվականին հրապարակված ՀՀ տարածքում 2023թ. մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին ամփոփագրի Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան:



Գծապատկեր 13. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 14. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (ֆոն), մգ/մ ³
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

Երևան քաղաքի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային հնգամյա միջին կոնցենտրացիաները, վերցված են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայք էջից:

3.6. ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հրազդան գետի ջրավազանային կառավարման տարածք (ԶԿՏ)

Գործունեության տարածքը գտնվում է Արաբկիր վարչական շրջանում, ուստի Հրազդան գետի ջրի որակի դիտացանցից ներկայացված է միջին և ստորին հոսանքների դիտակետերի տվյալները, որտեղ ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղյուսակ 3.6.1. Հրազդան գետի միջին և ստորին հոսանքներում ջրի որակի արդյունքները

Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51)	Ամոնիում իոն	3-րդ	5-րդ
	0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	Մանգան, կորալտ, ԸԱԱ Ընդհանուր ֆոսֆոր Ամոնիում իոն, վանադիում	3-րդ	5-րդ
			4-րդ	
			5-րդ	
	0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	Արսեն Վանադիում	5-րդ	5-րդ
	0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից վերև (54)		5-րդ	5-րդ
	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի մոտ	Նիտրիտ իոն, կորալտ, երկաթ, ԸԼԱ	3-րդ	5-րդ

Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
	(55)	Մանգան, նատրիում, քլորիդ իոն, ԿԶՆ ԹԿՊ5, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			5-րդ	
Հրազդան	Գետաբերան (56)	Նիտրատ իոն, արսեն, մանգան, կորալտ, կալցիում, նատրիում, բոր, ԸԱԱ, քլորիդ իոն, ԸԼԱ	3-րդ	
		Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	4-րդ	
		Ամոնիում իոն, վանադիում	5-րդ	
	գյ. Գեղանիստ (225)	Լուծված թթվածին, ԹԿՊ5, կորալտ, նատրիում	3-րդ	

Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
		Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Հրազդանի գետի ձախափնյա հարավ-արևելյան լանջի վրա, հեռավորությունը անմիջապես Հրազդան գետից ուղիղ գծով կազմում է 1700 մ:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի լրացուցիչ աղտոտվածություն չի առաջացնի:

3.7. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Անմիջապես գործունեության տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում են վայրի կենդանիները և բուսական աշխարհը:

Տարածքը զուրկը է հողաբուսական շերտից, ամբողջ տարածքը ասֆալտապատ է: Տարածքում գտնվում են շատ մաշված մանր եվ մեծ կրպակներ՝ շուկայի ամառային տաղավարները, որոնք չեն գործում և խարխուլ վիճակում են:

Նախագծի իրականացման դեպքում որևէ ազդեցություն կենսաբազմազանության և հողի բերի շերտի վրա տեղի չի ունենա:

3.8. ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐ

Բնության հուշարձանը գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտ է, որի պահպանության ռեժիմը սահմանվում է ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով:

ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում գտնվող բնության հուշարձանների ցանկը: Ցանկում ընդգրկված են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական բնության հուշարձաններ:

Երևան քաղաքում առկա է երկու բնության հուշարձան՝ **Երկրաբանական տիպի, որոնք ներկայացված են ստորև.**

Աղյուսակ 3.8.1. Երևան քաղաքի բնության հուշարձանների ցանկ

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
105.	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Մր. Սարգիս եկեղեցու մոտ
106.	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ

3.9. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 3.9.1. Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկ

Հուշարձան	կառուցված	Վայր, հասցե
Ամրոց Չորաբերդ	մ.թ.ա. 2 հզ	Քեռու փող.
Քարայր-կացարան «Նոր Արաբկիր-1», («Չորաբերդ-1»)	մ.թ.ա. 2 հզ, 14-17 դդ.	
<u>Ինստիտուտի համակառույց. Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը</u>	1968 թ.	Ազատության պող. 26
Հուշարձան Արմենակ Մնջոյանի	1973 թ.	
Խճանկարներ «Ներփակ կորեր». «Երկրաչափական տարածություն»	1970 թ.	Հ. Հակոբյան փող. 3
<u>Կամուրջ Հրազդան (Հրազդանի մեծ կամուրջ), (Կիևյան կամուրջ)</u>	1956 թ.	Կիևյան և Լենինգրադյան փող. միջև
Հիդրոէլեկտրակայանի շենք. Քանաքեռի Հ. Տեր-Աստվածատրյանի անվան Հէկ-ը	1936 թ.	Հրազդանի ձախ ափին, Քանաքեռի ձորում
Հուշարձան Հովսեփ Տեր-Աստվածատրյանի	1966 թ.	
Հուշահամալիր «Նոր Արաբկիր» («Վերածնունդ»)	1985 թ.	
Հուշադրյուր Նոր Արաբկիրի 50-ամյակին	1975 թ.	<u>Կոմիտասի պողոտա 19</u>
<u>Հուշարձան Ղազարոս Աղայանի</u>	1955 թ.	Կիևյան փող. 9
<u>Հուշարձան Նաիրի Զարյանի</u>	1974 թ.	Հ. Հակոբյան փող. նրբ 3
Հուշարձան Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին	1967 թ.	Ազատության պող.
<u>Հուշարձան «Մուսա-կիբեռնետիկա»</u>	1972 թ.	Հ. Հակոբյան փող. 3

Հուշարձան	կառուցված	Վայր, հասցե
Հուշարձան Ալեքսանդր Շիրվանզադեի	1958 թ.	Վաղարշյան փող. 24/17
Հուշարձան Ռուբեն Սևակի	1995 թ.	Բաբայան փող. 40
Հուշարձան «Վահագն Վիշապաքաղ»	1985 թ.	Վաղարշյան փող. 12
Հուշարձան Լև Տոլստոյի	1982 թ.	Ազատության պող. 5
Հուշարձան Բաֆֆու	1987 թ.	Կոմիտասի պող. 37
Հուշարձան Լևոն Օրբելու	1973 թ.	Օրբելի եղբայրների փող. 22
Մշակույթի տուն «Կանաչ»	1958 թ.	Ազատության պող. 19
Ջրանցք՝ Դալմայի	մ.թ.ա. 8-7 դդ.	Հրազդանի աջ ափին
Փողոցի կառուցապատում. Կիևյան փողոցը	1951-1953 թթ.	Կիևյան փող.
Քարայր-կացարանների համալիր Քանաքեռի	մջնդ	Հրազդանի կիրճի ձախ ափին, Քանաքեռ Հէկ մոտ
Քարայր-կացարան «Արաբկիր-11», («Նոր Արաբկիր-2»)	16-17 դդ.	Հրազդանի ձախափնյա զառիթափին, Դավիթաշենի կամրջի մոտ
Քարայր-կացարան «Քանաքեռ-4», («Նոր Արաբկիր-3»)	16-17 դդ.	Հրազդանի ձախափնյա զառիթափին, Քանաքեռի այլումինի գործարանի մոտ
Քարայր-կացարան «Քանաքեռ-5»	մջնդ	Հրազդանի ձախ ափին
Քարայր-կացարան «Քանաքեռ-7»	մջնդ	Հրազդանի աջ ափին
Քարայր-կացարան «Քանաքեռ-8»	մջնդ	Հրազդանի աջ ափին
Քարայր-մատուռ «Քանաքեռ-2»	մջնդ	Հրազդանի ձախ ափին

Շինարարության ազդեցության գոտում «Կոմիտասի շուկա»-ն է, որը հաշվառվել է, սակայն դեռ չի ընդգրկվել Երևանի հուշարձանների ցանկում: Հուշարձանի պահպանման համար նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Աշխատանքների ընթացքում որևէ այլ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

3.10. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից¹:

Աղյուսակ 3.10.1. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N		
1	Տարածքը	223 քառ. կմ
2	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
3	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 321.5 հա
4	այդ թվում՝ վարելահողեր	909.9 հա
5	Վարչական շրջաններ	12
6	Բնակչության թվաքանակը 2022թ. տարեակգրի դրությամբ	1008.677 հազ. մարդ

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատիկական ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

¹ www.armstat.am

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2022թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 3.10.2 Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն	34.8%,
✓ շինարարություն	43.3%,
✓ մանրածախ առևտուր՝	71.7%,
✓ ծառայություններ՝	86.1%:

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը:

Արաբկիր վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Աղյուսակ 3.10.3. Ազդակիր վարչական շրջանը

<i>Վարչական շրջան</i>	<i>Տարածքը, հա</i>	<i>Բնակչության թվաքանակը 2020 թ. տարեվերջին, հազ.մարդ</i>
Արաբկիր	1 325	114.9

4. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախագծի համար հիմք է հանդիսացել պատվիրատույի հայտը, անշարժ գույքերի սեփականության իրավունքի գրանցման 01-003-0214-0292 և 01-003-0214-0286 վկայականը, Երևանի քաղաքապետի կողմից 28.06.2024թ. տրված N01/50-01-485-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի համաձայն սահմանված կարգով հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվել են բնակելի կառուցապատման:

Կոմիտասի պողոտան հանդիսանում է Երևան քաղաքի կարևոր առանցքներից մեկը: Այն սկսվում է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտին կից՝ Հակոբ Հակոբյան փողոցում, և ձգվում մինչև «լամբադա» ուղեանցի և Ազատության պողոտայի հատման տրանսպորտային հանգույցը: Պողոտան բացվել է 1938 թվականին, իսկ կառուցապատումը ավարտվել է 1950-ականներին:

Սույն փաթեթում ներառված է Կոմիտաս 53/10 հասցեի, բարեկարգման և կառուցապատման էսքիզային նախագիծը: Սեփականության տարածքը կազմում է 4380 քմ: Ներկայում տարածքում գտնվում են շատ մաշված մանր եվ մեծ կրպակներ՝ շուկայի ամառային տաղավարները, որոնք չեն գործում և խարխուլ վիճակում են: Այստեղ նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի շենք: Շենքի հիմնական մուտքը կկազմակերպվի շուկային կից տարածքով՝ աջ կողմում գտնվող ճանապարհով, համապատասխան շուկայի սեփականատիրոջ կողմից տրված հավաստագրի: Ճանապարհի նախագիծը կներառվի ուղղաձիգ հատակագծման նախագծի մեջ:

Նախատեսվող բազմաբնակարան շենքը գոյություն ունեցող բազմաբնակարան շենքերից ամենակարճ հեռավորությունը կազմում է 40մ, շուկայի շենքից հեռավորությունը 13մ է, ավտոտնակներից՝ 3-15մ, նորակառույց շենքից 26մ:

Բնակելի հարկերի քանակը 19-ն են, հասարակական հարկերի քանակը՝ 6-ը, ստորգետնյա ավտոկայանատեղիի հարկերի քանակը՝ 4-ը:

Առաջին հարկից սկսած նախատեսվում են 5 կոմերցիոն հարկեր: 6-րդ հարկը հանդիսանում է բաժանարար հարկ բնակելի և կոմերցիոն հարկերի միջև, այստեղ նախատեսված է լողավազան, 2 մարզասրահ, յոգայի կենտրոն: 7 - 22րդ հարկերում ամեն հարկում կա 11-12 բնակարան, իսկ վերջին երեք հարկերում գտնվում են պենտհաուսները:

Ընդհանուր բնակարանների քանակը 191 է: Շենքը տեղադրված է շուկայի առանցքով, հուշարձանի նկատմամբ այն հանդիսանում է ֆոնային շենք և առավել

արժեքավորում այն: Վերգետնյա հարկերի քանակը 25 է, 4-ը ստորգետնյա ավտոկայան՝ 265 մեքենայի համար: Շենքի հիմնականադրը երկաթբետոնից է:

Ընդհանուր շինարարության մակերեսն ըստ նախագծի 42533մ² է, վերգետնյա շինարարության մակերեսը 29137մ² է, իսկ ստորգետնյա շինարարության մակերեսը՝ 13416մ²:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում նախատեսվում է բնակիչների պասիվ հանգստի համար կառուցել տաղավար՝ 30քմ, իսկ փոքրիկ բնակիչների համար մանկական խաղավայր 120քմ:

Բազմաբնակարան բնակելի շենքը նախագծվել է համաձայն ՀՀՇՆ 20-04-2020 սեյսմիկ նորմերի և համապատասխանում է 9 բալ սեյսմակայության:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման և կանաչապատման նախագծի:

4.1 ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄՈՆԻՏԻՆԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հիման վրա:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է 48 ամիս, 4,0 օրացուցային տարի:

Բանվորների առավելագույն քանակը կազմել է 82 մարդ, միջինը 52 մարդ:

4.2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է բնակելի շենքի կառուցման համար հատկացված հողատարածքը գտնվում է Կոմիտաս 53/10 հասցեում, շուկայի ետնամասում՝ 0,438 հա վրա:

Բնակելի շենքի արտաքին ինժեներական ցանցերի նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/ և իրականացումը ապահովում են համապատասխան գերատեսչությունները:

Նախատեսվող բնակելի շենքի ստորգետնյա հարկերի 1-ին հարկում նախագծված է էլեկտրական ենթակայան 1756կՎտ հզորությամբ, որը փոխարինելու է գոյություն ունեցող տարածքին կից ենթակայանին:

Բնակելի շենքի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի հարկի ջերմամեկուսացում: Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Նախագծով նախատեսվում է կառուցել 29 հարկանի շենք, որից 19 հարկը բնակելի, 6-ը՝ հասարակական նշանակության: Շենքն ունենալու է նաև 4 հարկանի ստորգետնյա ավտոկայանատեղի:

Շենքն ունի ուղղանկյունաձև ուրվագիծ 44,3մx18,0մ /վերգետնյա մաս/ և 69,3մx48,4մ /ստորգետնյա մաս/ առանցքային չափսերով: Շենքի բարձրությունը հողի մակերեսից կազմում է 91,8մ: Ստորգետնյա ավտոկայանատեղը նախատեսված է 265 մեքենայի համար:

Շենքի կոնստրուկտիվ համակարգը շրջանակակապային է, տանիքը հարթ: Ներքին հարդարումը և հատակը՝ ավանդական:

Շինարարության պայմանները նեղվածքային են: Ըստ երկրաբանական հետազոտությունների տվյալների տարածքի գրունտը դիտարկվող խորության վրա ժայռային է, ուստի շեպերի ամրացման խնդիր կարող է առաջանալ միայն որոշ տեղամասերում, որտեղ անհրաժեշտ է իրականացնել հենապատեր ըստ կոնստրուկտիվ լուծման:

Փորվածքի մշակման, հետլիցքի իրականացման աշխատանքներն իրականացնելիս պահպանվելու է ՄՆԻՊ 3.02.02-87 «Հողային կառուցվածքներ, հիմնատակեր և հիմքեր» պահանջները: Աշտարակային կոունկների հիմնատակի կայունությունը հաստատել փորձագիտական եզրակացությամբ:

4.3. ԿԱՌՈՒՅՑԻ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Շենքի տեխնիկական և տնտեսական ցուցանիշները

- Հողամասի մակերեսը՝ 4380 քմ;
- Կառուցապատման մակերեսը – 1351 քմ;
- Կանաչապատման մակերեսը – 1765 քմ;
- Ճանապարհներ և բարեկարգում – 1264 քմ;
- Ստորգետնյա հարկի մակերեսը – 13416 քմ;
- Ընդհանուր մակերեսը կազմում է 42553 քմ;
- Բնակարանների քանակ՝ 191;
- Կայանատեղը նախատեսված է 265 մեքենայի համար
- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝

բնակավայրերի;

- գործառնական նշանակությունը՝ կառուցապատման;
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի մոտ 40,3%-ը /մոտ 1765 մ²/:

Կանաչապատման աշխատանքների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատվող տարածք կբերվի բուսահող Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ գնման մեթոդով: Բուսահողի ծավալը, որը մասամբ ավտոկայանի տանիքին է, կազմում է՝ 2500քմ:

Կանաչապատումը ներառում է սիզամարգեր, թփեր և ծառատունկ: Կանաչապատման համար օգտագործվելու են դեկորատիվ թփեր, կեչի ծառատեսակ, ինչպես նաև ծաղկասածիլներ և բազամիա խոտի սերմ:

4.4. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- Ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- Գոյություն ունեցող տրանսֆորմատորի տեղափոխում,
- Երկրաբաշխական հիմնարար ցանցի կառուցում,
- Պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- Ժամանակավոր ճանապարհների կառուցում,
- Վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների տեղադրում /վագոն 3 հատ/,
- Ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում, անհրաժեշտության դեպքում վերատեղադրում կամ հեռացում,
- Մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- Բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- Անիվների լվացման կետի տեղադրում,
- Անվտանգության նշանների տեղադրում,
- Հակահրդեհային միջոցների տեղադրում:

Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի պահանջը ապահովելու նպատակով շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասը ծածկել թաղանդով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Շինարարության ընթացքում բանվորների խմելու և կենցաղային կարիքների համար օգտագործվելու է տարածքում գործող ծորակի ջուրը:

Բոլոր շինարարական աշխատանքները պետք է կատարվեն պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

4.5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Շինարարության տևողությունը կազմում է 48 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից: Աշխատանքային ռեժիմը՝ օրը 8 ժամ, շաբաթը 6 օր, տարեկան 305 օր:

Շինհրապարակում աշխատելու է 82 բանվոր, ինժեներներ – 4 մարդ, անվտանգության ծառայող – 1 մարդ:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունն ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ,

սաղավարտ, ակնոց: Շինհրապարակը ցանկապատվելու է, լուսավորվելու է, տեղադրվելու են պաշտպանիչ և արգելակիչ սարքեր, զգուշացնող նշաններ, սանիտարակենցաղային շինությունով:

Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպումը և անվտանգության ապահովումը իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 5-ի N07-Ն հրամանով հաստատված «Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույցը»-ի պահանջներով:

Շինտեխնիկա

• Աշտարակային կցովի վերամբարձ կռունկ ZOOMLION WA6017-8 -1 հատ (սլաքի երկարությունը-60մ, բարձրությունը-60մ, բեռնաբարձությունը-8 տոննա),

• Ավտոմոբիլային կռունկ բեռնման, բեռնաթափման համար КС55713-6 ГАЛИЧАНИН - 1 հատ,

• Ավտոմոբիլային կռունկ /մոնտաժելու և ապամոնտաժելու համար/

• Գլդոն GAT CS 563 - 1 հատ

• Էքսկավատոր CAT 320 – 2 հատ,

• Բուլդոզեր CAT D6R – 1 հատ

• Շարժական կոմպրեսոր Comp air C76 – 2 հատ

Շինարարական տեխնիկան վառելիքով լիցքավորումը իրականացվելու է տեղում պարբերաբար վառելիք տեղափոխող ցիստերնից:


Բոլոր տիպի շինարարական աշխատանքները իրականացվելու են պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները ցանկապատվելու են, ունենալու են վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:

Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը լուսավորվելու են ըստ ГОСТ 12.1.046-85: Լուսավորությունը կլինի հմաչափ, առանց կույրացնող էֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի իրականացվի:

Նկար 6. Միաձույլ ե/բ աշխատանքներ



Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների իրականացման փուլում հանվելու է 57300.0մ³ հողային զանգված, որից 3300.0մ³ օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ մնացած՝ 54000.0մ³ քաղաքապետարանի թույլտվությամբ կտեղափոխվի հատուկ հատկացված վայր:

Գրունտի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ՝ 10,5տ բեռնունակությամբ:

Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը: Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքն իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ, տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 20մ:

Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի բահով:

Էներգատեսուրսներ

Շինարարության ընթացքում էլեկտրաէներգիայի կպահանջվի 200.0ԿՎտ ծախս.

- Աշտարակային կռունկ ZOOMLION WA6017-8 – 60,
- Եռակցման սարքեր – 30,
- Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ – 60,
- Էլեկտրաթրթռիչներ – 60,
- Շինհրապարակի լուսավորում և կենցաղ – 20,
- Շենքի լուսավորում – 20:

Քտեղ – 250կՎտ

Փաշվ. – Քտեղ. * Կպահանջ = 250կՎտ*0.8 = 200ԿՎտ

Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկում

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկմնա միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է.

- Կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը:
- արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը:
- շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը, շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների՝ իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Ժամանակավոր գույքային շինությունների մակերեսների հաշվարկ

Աշխատանքների կատարման ժամանակացույցում բանվորների առավելագույն քանակը կազմել է 82 մարդ:

Համապատասխան նորմատիվային հարաբերակցության ԻՏԱ և ծառայողների թիվը կկազմի 4 մարդ և 1 պահակ:

Ըստ ստացված թվաքանակի ընդհանուր առմամբ տեղադրվելու է

1. 1 վազոն 24.3 մ² մակերեսով գրասենյակի համար,
2. 1 վազոն 24,3 մ² մակերեսով որպես հանդերձարան և սանհանգույց, որտեղ տեղադրվելու է լվացվելու համար 3 ծորակ, 2 ցնցուղ և 2 զուգարան:
3. 2 վազոն 24.3 մ² մակերեսով որպես սննդի ընդունման կետ
4. Առնվազն 1 փակ պահեստ 24.5 մ² մակերեսով: Կարելի է օգտագործել նաև կառուցված մակերեսները:

Շինարարական աշխատանքների ընթացքում տեղադրվող ժամանակավոր վազոնների ջրահեռացումը կատարվելու է տարածքում գործող կոյուղու ցանցով:

5. ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Բնակելի շենքերի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Շիհրապարակը ապահովված է խմելու որակի ջրով և կոյուղիով: Տարածքի ջրցանման համար կօգտագործվի ջրցան մեքենա՝ պայմանագրային հիմունքներով:

6. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Շինարարական աշխատանքների առաջացող թափոնատեսակների տեսակը և քանակը.

Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած

Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ

Ծածկագիր 91200601 01 00 4 վտանգավորության դաս 4

Թափոնի կազմը և դրա բաղադրիչների թունունակությունը

բետոն՝ 40%, ավազ 5%, երկաթ՝ 14%, փայտի կտորներ՝ 10%, ջրմապաշպանիչների մնացորդ 10%, ապակի՝ 10%, մետալոպլաստիկ՝ 7%, այլ՝ 4%:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած շինաղբը ժամանակավոր կուտակվելում է համապատասխան տարածքում, որտեղ ապահովված են աղբատարի ազատ մուտքն աղբարկղերի մոտ: Դրանք հարմարեցված կլինեն այնպես, որ հեշտությամբ իրականացվի աղբի բարձումը և տեղափոխումը: Շինարարության ընթացքում առաջացող 20 տոննա կենցաղային աղբը պարբերաբար կտեղափոխվի աղբավայր:

չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)

Ծածկագիր 91200400 01 00 4 վտանգավորության դաս 4

Թափոնի կազմը և դրա բաղադրիչների թունունակությունը

Թուղթ՝ 20-25%, պոլիէթիլեն՝ 25-30%, պոլիպրոպիլեն՝ 7-8%, ապակի՝ 3-5%, ռետին՝ 3-5%, սննդի մնացորդ՝ 20-25%, երկաթ՝ 3-5%, փայտ՝ 5% և այլ:

Կենցաղային աղբի համար նախատեսվելու են աղբարկղեր, որոնք տեղադրվելու են առանձնացված տարածքում, որտեղ ապահովված են աղբատարի ազատ մուտքն աղբարկղերի մոտ: Դրանք հարմարեցված կլինեն այնպես, որ հեշտությամբ իրականացվի աղբի բարձումը և տեղափոխումը: Շինարարության ընթացքում առաջացող 10 տոննա կենցաղային աղբը պարբերաբար կտեղափոխվի աղբավայր:

Եռակցման խարամ

Ծածկագիր 31404800 01 99 4 վտանգավորության դաս 4

Եռակեցման խարամը առաջանում է եռակեցման աշխատանքներից ավելացած էլեկտրոդների մնացորդներից

Թափոնի կազմը և դրա բաղադրիչների թունունակությունը՝

Երկաթի օքսիդ՝ 14,7%, մանգանի օքսիդ՝ 12,8%, կալցիումի օքսիդ՝ 6,3%, սիլիցիումի օքսիդ՝ 50,1%, տիտանի օքսիդ՝ 14,5%, ալյումինի օքսիդ՝ 1,4%, այլ միացություններ՝ 0,2%

Եռակեցման խարամի թափոնները հավաքվում են փակվող մետաղական արկղում: Որոշակի քանակությամբ կուտակված թափոնները հանձնվում են համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությանը:

Մետաղական արկղները, որտեղ հավաքվում և ժամանակավոր պահվում են եռակեցման էլեկտրոդներից առաջացած թափոնները պետք է տեղադրված լինեն փակ՝ մթնոլորտային տեղումներից պաշտպանված տարածքում: Առաջացող թափոնների քանակը 0,360տ

Յուղոտված լաթեր

Ծածկագիր 58200600 01 01 4 վտանգավորության դաս 4

Առաջանում է յուղոտված մակերեսների, ձեռքերի, սարքավորումների մաքրումից

Թափոնի կազմը և դրա բաղադրիչների թունունակությունը

Գործվածք՝ 81-84%, յուղ՝ 10-14%, ջուր՝ 3-6%

Յուղոտված լաթերը ժամանակավոր կուտակում են կափարիչով մետաղական արկղներում, կուտակվելուց հետո թափոնները հանձնվում են համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությանը: Առաջացող թափոնների քանակը կազմում է 0,5տ:

Զրի պարզեցման շլամեր

Ծածկագիր 94300100 04 00 4 վտանգավորության դաս 4

Մեքենաների անվադողերի լվացման հանգույցում տեղադրված շրջանառու ջրի ավազանների նստվածք: Շին աշխատանքների ամբողջ ընթացքում առաջանում է 2204,6 կգ նստվածք:

Նստվածքը կարող է օգտագործվել շինարարակ աշխատանքներում, որպես ավազ, կամ տեղափոխվել շինադրի համար նախատեսված աղբավայր:

Շինարարության ընթացքում առաջացող թափոնները կտեղափոխվեն փակ կողերով և թափքի ծածկով կահավորված ինքնաթափերով:

7. ԿԱՆԱՀԱՊԱՏՈՒՄ

Նախատեսված է շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել: Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 40 % և ավելի: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի մոտ 40.3% /1765մ2/:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի N108 որոշման պահանջներին համապատասխան:

Կանաչապատման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կառուցապատվող տարածք կբերվի լրացուցիչ բուսահող /2500քմ ծավալով/:

Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգեր և ծառատունկ: Կանաչապատման համար օգտագործվելու են դեկորատիվ ծառեր, թփեր, ինչպես ծաղկասածիլներ և բազմանյա խոտերի տեսակներ:

Ծառերի լավ կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգում և խնամք: Կանաչապատման նախագիծը մշակվում է Երևանի քաղաքապետարանի կողմից: Ոռոգման ջրի քանակը հաշվարկված կլինի քաղաքապետարանի կողմից մշակված կանաչապատման նախագծի մեջ:

8. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

8.1. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- նոր կառուցվող շենքերի հիմքերի փորման ընթացքում

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված
- շինարարական տեխնիկայի շահագործմամբ
- բետոնային աշխատանքների իրականացմամբ
- շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

8.2 Ջրային ռեսուրսներ

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի ծավալի հաշվարկ.

Ջրապահանջը հաշվարկվում է համաձայն ՀՀՇՆ 2.04.01-2014:

Շինարարությունը իրականացվելու է մեկ 8 ժամյա հերթափոխով

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրապահանջը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{բ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T, \quad \text{որտեղ}$$

n_1 – ԻՏԱ թվաքանակն է՝ 4 մարդ

N_1 – ԻՏԱ խմելու ջրն նորման է հերթափոխում՝ 0.016 մ³օր/մարդ

n_2 – բանվորների թվաքանակն է՝ 82 մարդ

N – բանվորների խմելու ջրի ծախսը հերթափոխում՝ 0.025 մ³օր/մարդ

T - աշխատանքային օրերի թիվն է ամբողջ շին.ընթացքում՝ 1220 օր

$$W_{\text{բ.}} = (4 \times 0.016 + 82 \times 0.025) \times 1220 = 2579 \text{ մ}^3/\text{շին. ժամանակ.}$$

բ) Ցնացուղարանների համար ջրապահանջը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{ց.}} = n_3 \times k \times a \times g \times T, \quad \text{որտեղ}$$

որտեղ՝ n_3 – մեկ ցնցուղային ցանցի համար ջրի ծախսի նորմատիվն է, համաձայն ՀՀՇՆ

$$2.04.01-2014 \quad n_3 = 0,5 \text{ մ}^3/\text{ժ}$$

k - գործակից, որը հաշվի է առնում ցնցուղի աշխատանքի տևողությունը

հերթափոխի ավարտին, $k = 60/60 = 1$;

a - ցնցուղային ցանցերի քանակն է, $a = 2$;

g - հերթափոխների օրական թիվն է, $g = 1$;

t - աշխատանքային օրերի թիվն է ամբողջ շին.ընթացքում՝ 1220 օր

$$W_g = 0.5 \times 1 \times 2 \times 1 \times 1220 = 1220 \text{ մ}^3/\text{շին. ժամանակ.}$$

գ) Ընդամենը շինաշխատողների տնտեսակենցաղային կարիքներ՝

$$W_{\text{տնտ.}} = W_{\text{խ.}} + W_g = 2579 + 1220 = 3799 \text{ մ}^3/\text{շին. ժամանակ}$$

Տարեկան ջրապահանք՝

$$W_{\text{տնտ. տ}} = 3799 / 4 = 949.75 \text{ մ}^3/\text{տարի}$$

դ) Կենցաղային կեղտաջրերի հեռացում

Թարմ ջրի օգտագործման կորուստը կազմելու է 10%, կամ $3799 \times 0.1 \cong 376 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}$

Առաջացած կեղտաջրերի քանակը՝

Շին. ժամանակահատվածի ամբողջ ընթացքում՝

$$W_{\text{տնտ. ար}} = 3799 - 376 = 3423 \text{ մ}^3/\text{շին. ժամ}$$

Տարեկան քանակը՝

$$W_{\text{տնտ. ար տ}} = 3423 / 4 = 856 \text{ մ}^3/\text{տարի}$$

Առաջացած կեղտաջրերն ուղղվելու են քաղաքային կոյուղու կոլեկտոր:
Ջրահեռացման ռեժիմը՝ 305 օր/տարի, օրը 8 ժամ:

Կեղտաջրերի ժամային ծախսը՝

$$W_{\text{տնտ. ար ժ}} = 856 / 305 / 8 = 0.35 \text{ մ}^3/\text{ժ}$$

Կեղտաջրերի կարգ՝ կոմունալ-կենցաղային:

Տաք և չոր եղանակներին շինհրապարակը նախատեսվում է օրը երկու անգամ ջրցանել փոշու գոյացումը նվազացնելու նպատակով: Ջուրը բերվելու է ցիստերներով պայմանագրային հիմունքներով:

Ջրի ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U_1 = S_1 \times Z_1 \times T \times N, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 4380 քմ,

Z_1 – 1 մ^2 օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 720

N – օրվա ընթացքում ջրցանումների քանակը, 2

$$U_1 = (4380 \times 0.0015 \times 720) \times 2 = 9461 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}:$$

Ջրցանման ջուրը, ամբողջությամբ օգտագործվում է անվերադարձ՝ արտահոսքեր չեն առաջանում:

Անվադողերի լվացման կետի նկարագիրը և ջրի ծախսը

Բոլոր մեքենաները, որոնք մտնում են շինհրապարակ, տարածքից դուրս գալիս անվադողերը պարտադիր լվացվելու են: Այդ միջոցառումը թույլ կտա խուսափել հարակից տարածքները աղտոտումից:

Անվադողերի լվացման հանգույցը իրենից ներկայացնում է էստակադա, որը տեղադրված է բետոնյա հարթակի վրա: Էստակադայի գաբարիտները հապատասխանում են բեռնատար մեքենաների չափսերին: Լվացման հարթակը ունենալու է 2-3 % թեքություն դեպի լվացված ջրերի հավաքման ավազան: Ջրահեռացման իջնահոս խողովակի տրամագիծը լինելու է 150մմ-ից ոչ պակաս, թեքությունը՝ 3 %:

Անվադողերի լվացման հանգույցը ունենալու է շրջանառու ջրի համակարգ:

5-8 տ բեռնատվության մեքենաների համար բարձր ճնշման տակ ճկափողով (քարշեր) լվանալու դեպքում ջրի ծախսը կազմում է 120լ: Ջրի կորուստը 10-15%: Միջինը օրական շինհրապարակ մուտք է գործելու 5-8 բեռնատվության 3 մեքենա:

Ջրի ծախսը շինաշխատանքների ժամանակ՝

$$W = 3 \times 120 \times 1220 = 439\,200 \text{ մ}^3/\text{շին ժամ}$$

1220 շինաշխատանքների օրերի քանակն է:

Ջրի կորուստները մեքենաների լվացման ընթացքում՝

Լվացման ընթացքում ջրի կորուստը կազմում է 10-15%, միջինը 12,5 %

$$439\,200 \times 0,125 = 54\,900 \text{ մ}^3/\text{շին. ժամ}$$

Նստեցման ավազաններ ուղղվող ջրի քանակը կկազմի՝

$$439\,200 - 54\,900 = 384\,300 \text{ մ}^3/\text{շին. ժամ}$$

Խոնավ նստվածքի հետ ջրի միջին կորուստը՝ մոտ 40% է

նստվածքի հետ տարեկան ջրի կորուստը կլինի՝

$$384\,300 \times 0,4 = 153\,720 \text{ մ}^3/\text{շին. ժամ}$$

Ընդհանուր կորուստը՝

$$V_{\text{ընդ}} = 54900 + 175\,680 = 230\,580 \text{ մ}^3/\text{շին.ժամ}$$

Շրջանառու ջրի քանակը կկազմի՝


$$384\,300 - 175\,680 = 208\,620 \text{ մ}^3/\text{շին.ժամ, կամ } 54,3\%$$

Մեքենաների լվացման համար թարմ ջրի տարեկան պահանջը՝ 208620 մ³/շին.ժամ:

Նստեցման ավազաններ ուղղվող ջրի քանակը կկազմի՝ 384 300 մ³/շին.ժամ կախված նյութերի պարունակությունը այդ ջրերում՝ 7,3գ/լ: Նստեցման ավազան ուղղվող ջրերում նստվածքի տարեկան քանակը կկազմի $384\,300 \times 7,3 / 1000 = 2805,4$ կգ/տարի, 2,81տոննա/շին.ժամ:

Նստեցման ավազանում կախված նյութերի 85% մնում է ավազաններում նստվածքի տեսքով $2805,4 \times 0,85 = 2384,6$ կգ/շին.ժամ: Լվացման կետից արտադրական կեղտաջրերի արտահոսք տեղի չի ունենում:

Մեքենաների անվադողերի լվացման տեխնոլոգիական սխեման բերված է նկ8.2:



Նկ. 5 Անվադողերի լվացման տեխնոլոգիական սխեմա

8.3. Օդի աղտոտում

Շինարարական աշխատանքները տևելու են 48 ամիս (4 տարի)՝ ըստ ներկայացված ժամանակացույցի, որից հողային աշխատանքները՝ 10 ամիս, եռակցման աշխատանքները՝ մոտ 26 ամիս: Աշխատանքներն իրականացվելու են մեկ հերթափոխով ժամը 9.00-18.00, շաբաթը 6 օր, 8 ժամյա ռեժիմով:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում մթնոլորտային օդի վրա ազդեցության հիմնական աղբյուրներն են.

- Հողային աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները,
- Շինարարական տեխնիկայի, ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ ծխազագերի արտանետումները
- Եռակցման աշխատանքների ժամանակ եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումները
- Տարածքի ասֆալտապատման ժամանակահատվածում ածխաջրածինների, ածխածնի օքսիդի, ֆենոլի և ազոտի օքսիդների արտանետումները:

Արտանետումների աղբյուրները անկազմակերպ են:

Ելակետային տվյալներ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի փոխադրամիջոցների և սարքերի ցանկը բերված է աղյուսակ 8.3.1-ում:

Շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների և սարքերի ցանկը

Աղյուսակ 8.3.1

Հ/Հ	Անվանումը	Քանակը, հատը
1.	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ ZOOMLION WA6017-8	1
2.	Ավտոմոբիլային կոունկ բեռնման, բեռնաթափման համար KC55713-6 ГАЛИЧАНИН	1
3.	Ավտոմոբիլային կոունկ /մոնտաժելու և ապամոնտաժելու համար/	1
4.	Գլդոն GAT CS 563	1

5.	Էքսկավատոր CAT 320	2
6.	Բուլդոզեր CAT D6R	1
7.	Ավտոինքնաթափ	Ըստ հաշվարկի
8.	Ավտոբետոնախառնիչ Kamaz 58149z	Ըստ հաշվարկի

Հողային և եռակցման աշխատանքներ

Հողային աշխատանքների իրականացման փուլում հանվելու է 57300.0մ³ հողային զանգված, որից 3300.0մ³ օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ մնացած՝ 54000.0մ³ քաղաքապետարանի թույլտվությամբ կտեղափոխվի հատուկ հատկացված վայր:

Եռակցման աշխատանքների կատարման համար շինարարության ժամանակահատվածում ծախսվելու է 2100 կգ եռակցման էլեկտրոդ:

Դիզ.վառելիքի քանակի ծախսը հողային և ասֆալտապատման աշխատանքների իրականացման ժամանակահատվածի համար կազմում է 5,1 տոննա:

Շինարարության ժամանակ անհրաժեշտ նյութերի ծախսը բերված է աղյուսակ 8.3.2-ում:

Շինարարության ժամանակ անհրաժեշտ նյութերի ծախսը

Աղյուսակ 8.3.2

Նյութի անվանումը	Ծախսը շինարարության ժամանակ, տ
1. Դիզելային վառելիք	5,1
2. Ավազ	9,2
3. Խիճ	11,5
4. Ասֆալտ, բիտում	12,1
5. Էլեկտրոդներ	2,1

Շինարարության ժամանակ մթնոլորտ արտանետված նյութերի հաշվարկը կատարված է գործող մեթոդակարգերի համաձայն և բերված է աղյուսակ 8.3.3-8.3.6 /3,4,5,6/: Շինարարության ժամանակ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը բերված է 8.3.6 աղյուսակում:

Շինարարության ժամանակ մթնոլորտ արտանետված նյութերի հաշվարկը, տ/շինժամանակ

Աղյուսակ 8.3.3

Ցուցանիշի անվանումը	Հանույթի և բերվող նյութերի քանակը, G, T	Ֆրակցիայի բաժնեմասը, K1	Աերոզոլի փոխանցվող փոշու բաժնեմասը, K2	Տեղանքի կլիմայական պայմանները հաշվի առնող գործակիցը, K3	Տեղանքի պայմանները հաշվի առնող գործակից, K4	Նյութի խոնավությունը հաշվի առնող գործակից, K5	Նյութի խոշորությունը հաշվի առնող գործակից, K7	Թափման բարձրությունը հաշվի առնող գործակից, B	Փոշու արտանետումների հաշվման բանաձևը տ/շ ժամ A=G*K1*K2*K3*K4*K5*K7*B
1. Գրունտի հանում	83085	0.05	0.02	1	1	0.7	0.5	0.4	11,6
2. Հետլիցք	4785	0.05	0.02	1	1	0.7	0.5	0.4	0,67
3. Խիճ	11,5	0,04	0,02	1	0,2	0,6	0.6	0,5	0,00033
4. Ավազ	9,2	0,05	0,02	1	0,2	0,4	0.8	0,5	0,0003
Ընդամենը									12,27

Եռակցման ագրեգատից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը տ/շինժամանակ

Աղյուսակ 8.3.4

Ցուցանիշի անվանումը	Չափման միավորը	Մեծությունը
1. Ծախսված էլեկտրոդների քանակը շինարարության ժամանակահատվածում	Կգ	2100
2. Արտանետվող վնասակար նյութերի տեսակարար ցուցանիշը 1կգ ծախսված նյութի վրա	գ/կգ	
- Աերոզոլ	գ/կգ	6,07
- Մանգանի օքսիդ	գ/կգ	1,0
- Ֆտորիդներ	գ/կգ	1,5
- Քրոմի օքսիդներ	գ/կգ	1,43
- Ֆտորաջրածին	գ/կգ	0,001
3. Եռակցման աերոզոլի արտանետումներ	տ	0,0127
4. Մանգանի օքսիդի արտանետումներ	տ	0,021
5. Ֆտորիդներ	տ	0,0315
6. Քրոմի օքսիդներ	տ	0,03

7. Ֆտորաջրածին	տ	0,000021
Ընդամենը		0,209

Շինարարական տեխնիկայից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը

Աղյուսակ 8.3.5

Ցուցանիշի անվանումը	Մթնոլորտ արտանետման տեսակարար նորման տ/տ	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը շինարարության ժամանակահատվածում, տ
Դիզելային վառելիքի գումարային ծախսը, տ		5.1
Մթնոլորտ արտանետումներ		
1. Ածխածնի օքսիդ	0,1	0,51
2. Ածխաջրածիններ	0,03	0,153
3. Ազոտի օքսիդ	0,04	0,204
4. Մուր	0,0155	0,07905
5. Ծծմբային անհիդրիդ	0,002	0,0102
6. Բենզ/ա/պիրեն	0,069 գ/ր	$0,3519 \cdot 10^{-6}$
Ընդամենը		0.956

Ասֆալտապատման գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկ

Աղյուսակ 8.3.6

Ցուցանիշի անվանումը	Զափման միավորը	Մեծությունը
1. Ասֆալտի ծախսը ասֆալտապատման ժամանակ	տ	12,1
2. Մթնոլորտ արտանետվող բիտումի քանակը	տ	0,03
3. Ասֆալտապատման աշխատանքների ժամանակ տեսակարար արտանետումները - Ածխաջրածիններ	տ/շինժամ	0,000726

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը,
տոննա/շին.ժամանակ

Աղյուսակ 8.3.7

Աշխատանքների անվանումը	Փուլի	Ածխաջրածիններ	Ծծմբային անիդրիդ	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդ	Մուր	Բենզ/ա/ալիբեն	Եռակցման ալերգոլ	Մանգանի օքսիդ	Ֆտորիդներ	Քլորմի օքսիդներ	Ֆտորաջրածիններ	Ընդամենը /տ/շին.ժամանակ/
Նախապատրաս տական շինարարական աշխատանքներ	12,27												12,27
Շինարարական տեխնիկայի աշխատանքներ		0.153	0.0102	0.51	0.204	0.07905	$0,3519 \cdot 10^{-6}$						0.956
Եռակցման աշխատանքներ								0.127	0.021	0.0315	0.03	0.000021	0.209
Ասֆալտապատո ւմ		0,000726											0.000726
Ընդամենը	12,27	0,153726	0.0102	0.51	0.204	0.07905	$0,3519 \cdot 10^{-6}$	0.127	0.021	0.0315	0.03	0.000021	13,25

8.3.1 Մթնոլորտի աղտոտվածության սպասվելիք մակարդակները շինարարության ժամանակահատվածում

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտ է արտանետվում 13 ինգրեդիենտ 13.465 տոննա քանակի:

Հաշվարկներով որոշված են մթնոլորտ արտանետվող հիմնական վնասակար նյութերի միջին օրական արտանետումների քանակը, որի հիման վրա կատարված է մթնոլորտի մերձգետնյա շերտում աղտոտվածության մակարդակների կանխատեսում: Արդյունքները բերված են աղյուսակ 8.3.1.1-ում:

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտի աղտոտվածության մակարդակների կանխատեսում

Աղյուսակ 8.3.1.1

Արտանետվող նյութերի անվանումը	Մթնոլորտ արտանետումների քանակը տ/օր	ՄԹԿ բնակելի գոտու համար Մգ/մ ³	Վնասակար նյութերի սպասվելիք կոնցենտրացիաները բնակելի գոտու համար	
			Մգ/մ ³	ՄԹԿ միավոր
1. Փոշի	0.01	0,5	0,00636	0.0127
2. Ծմբային անհիդրիդ	0.000008	0,5	0,00702	0.014
3. Ածխածնի օքսիդ	0.00042	5,0	2,6	0,52
4. Ազոտի օքսիդներ	0,00017	0,2	0,008	0.04

Ինչպես երևում է աղյուսակից հիմնական վնասակար նյութերի համար աղտոտվածության մակարդակները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում:

8.3.2. Արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկ

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի, բնությանը հասցված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա

տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի»՝ հաստատված 21.01.2005թ. թիվ 91-Ն ՀՀ կառավարության որոշման /8/:

Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$U = \sum q_i \Phi_i \sum \Phi_i \quad (1),$$

U - ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով

$\sum q_i$ -աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտողգործակիցն է, որը վերցվում է համաձայն նշված կարգի 9 աղյուսակի:

$\sum \Phi_i$ -i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն մեթոդակարգի 10 և 11 կետերի:

Φ_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանությանգործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն,

$\Phi_g = 1000$ դրամ:

$\sum \Phi_i$ գործակիցը որոշվում է 5-րդ բանաձևով՝

$$\sum \Phi_i = q * \sum SU_i \quad (5)$$

$\sum SU_i$ - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

q - գործակից, $q=1$ ՝ անշարժ աղբյուրների համար, $q=3$ ՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

$\sum SU_i$ - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 8.3.2.1-ում:

Տնտեսական վնասի հաշվարկ

Աղյուսակ 8.3.2.1

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Շգ	Փգ	Վi	Տնտեսական վնասը, ՀՀ դրամ
	Swi, տ	q	Քi=SUi x q				Ա = Շգ Փգ Σ ՎiՔi
Փոշի	12,27	1	12,27	8	1000	10	981600
Մանգանի օքսիդ	0.021	1	0.021	8	1000	705	118440
Ածխածնի օքսիդ	0.51	3	1.53	8	1000	1	12240
Ածխաջրածիններ	0.154	3	0.462	8	1000	3	11088
Ազոտի օքսիդներ	0.204	3	0.612	8	1000	12.5	61200
Մուր	0.07905	3	0.237	8	1000	41.5	78684
Ծծմբային անհիդրիդ	0.0102	3	0.0306	8	1000	16.5	4039
Ֆտորաջրածին	0,000021	1	0,000021	8	1000	980	165
Ֆտորիդներ	0,0315	1	0,0315	8	1000	980	246960
Բենզ/ա/պիրեն	0,3519*10 ⁻⁶	3	1,056*10 ⁻⁶	8	1000	12,6*10 ⁵	106445
Եռակցման աերոզոլ	0,127	1	0,127	8	1000	705	716280
Քրոմի օքսիդներ	0,03	1	0,03	8	1000	10000	2400000
Ընդամենը							4.737.141

Արտանետումներից շրջակա միջավայրին հասցված տարեկան տնտեսական վնասը գնահատվում է 4.737.141 ՀՀ դրամ:

8.3.3. Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ դադարացնել հողային աշխատանքները:

9. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում
 էկսկավատորը, իսկ ավարտին գլղոնը: Միաժամանակ այս շինտեխնիկան չի
 շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ:
 Էկսկավատորը աշխատելու է 4 ամիս աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 85 դԲ:
 Գլղոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 3 ամիս աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$,
 կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ $\leq 200 \text{ կգ/մ}^2$: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m_{է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2 \quad [15]$$

$$I_{աղ} = 13 \lg m_{է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ $m_{է} = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ^2 ,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/մ^2

$$K=1,3 \quad m_{է} = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg m_{է} - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Ջարդիչի շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները,
 տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան:
 Ձայնամեկուսացումը $R_{ստ.ը}$ ըստ աղուսյակ 2 ՝ կազմում է միջինը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

$$\text{Գլղոնի համար } LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը էքսկլավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

9.1 Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, բերված են աղյուսակ 9.1.1

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Աղյուսակ 9.1.1

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X_0 , Y_0 և Z_0 առանցքներով			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ ² .10 ⁻³	դԲ	մ/վ .10 ⁻³	դԲ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75
1. Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: 2. Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի

սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման նախատեսվում են մի շարք միջոցառումներ:

- Շինարարական աշխատանքների ժամանակ տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2 անգամ, իրականացնել շինհրապարակի ջրցանում:
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի տեխնիկական վիճակը,
- արգելել անսարք տեխնիկայի շահագործումը շինհրապարակում
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով
- օգտագործել միայն բարձր որակի դիզվառելիք
- Տարածքում կտեղադրվի քաղաքապետարանի կողմից տրամադրվող, փոշու արտանետումներ 24 ժամյա ռեժիմով չափող սարք: Արտանետումները նորմերից գերազացելու դեպքում կիրականացվեն լրացուցիչ, փոշենստեցման միջացառումներ:
- Շենքերի ֆասադները, բարձրացմանը համատեղ կծածկվեն ցանցով, փոշու արտանետումները նվազացնելու նպատակով:
- նախատեսել բեռնատար մեքենաների անվադողերի համար լվացման կետ, որը կաշխատի շրջանառու ջրի համակարգով
- Շինհրապարակը ամբողջությամբ ցանկապատվելու է, ինչը կբացառի շինհրապարակից դուրս տարածքների աղտոտումը և կծառայի որպես աղմուկի էկրան:
- Շինհրապարակը ամբողջությամբ ցանկապատվելու է, ինչը կբացառի հարևանությամբ գտնվող «Կոմիտասի շուկա»-ի շենքի վրա բացասական ազդեցությունը:
- Որպես հուշարձան և հատուկ նշանակության շենք «Կոմիտասի շուկա»-ի պարսպին կփակցվեն համապատասխան նշաններ՝ տարածքում սահմանափակող

գործունեությունների վերաբերյալ, կտեղադրվեն տեսախցիկներ՝ տարածքը շուրջօրյա հսկելու նպատակով:

- Նախագծով նախատեսվում է շենքի բակերը բարեկարգել և կանաչապատել:
- Կբացառվի շինարարակից դուրս տարածքների աղտոտումը շին և կենցաղային աղբով:

11. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ և ՀՐՇԵՁ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, պետք է հրահանգավորվեն աշխատանքների ղեկավարի կամ անվտանգության ինժեների կողմից
- Կողմնակի անձանց մուտքը շինարարակ պետք է արգելվի
- Աշխատողները պետք է ապահովված լինեն սաղավարտներով, պաշտպանիչ ակնոցներով, արտահագուստով և կոշիկներով
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- շինաշխատանքներում չընդգրկել 18 տարեկանից ցածր տարիքի անձանց
- Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ապահովելով անվտանգության կանոնների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի:

12. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Շրջակա միջավայրի մոնիթորինգը թույլ կտա արագ արձագանքել և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտումները կանխելու համար: Մոնիթորինգի անցկացման նախնական ծրագիրը բերված է աղյուսակ 12.1-ում, մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը՝ աղյուսակ 12.2-ում: Մոնիթորինգի իրականացման քարտեզը բերված է հավելվածում:

Մոնիթորինգի ծրագիր

Աղյուսակ 12.1

Մոնիթորինգի օբյեկտը	Նմուշառման հաճախականությունը	Գործողություն	Հաշվետվություն
Շինհրապարակ և հարակից տարածք, Մթնոլորտային օդ	Մշտական , օրը 24ժամ	Փոշի	Մոնիթորինգի արդյունքները արտացոլված կլինեն մատյանում
Աղմուկ	15 օրը մեկ	Աղմուկի մակարդակ դԲ	Մոնիթորինգի արդյունքները արտացոլված կլինեն հաշվետվություններում

Մոնիթորինգի իրականացման արժեքը

Աղյուսակ 12.2

N	Նմուշի անվանումը	Նմուշառման հաճախությունը, օր/մեկ	Նմուշների քանակը, հատ	Մեկ նմուշի անալիզի արժեքը, հազ.դրամ	Անալիզների տարեկան քանակը, հատ	Տարեկան արժեքը, հազ.դրամ
1	Օդ	Օրեկան 24 ժամ	2	Մշտադիտարկումը իրականացվում է ավտոմատ սարքով		
5	Աղմուկի մակարդակի չափումներ	15	2	10	24	240
	Ընդամենը					240

* Ընդհանուր մոնիթորինգի արժեքը կազմում է 240 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ

Բնապահպանական կառավարման պլանը մոնիթորինգի ծրագրի հետ համատեղ թույլ կտան գնահատել և հսկել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ժամանակին ահազանգել խախտումների մասին, որպեսզի դրանք կանխարգելվեն, կասեցվեն և վերացվեն:

Բնապահպանական կառավարման պլանը և մոնիթորինգի ծրագիրը բերված են 12.3 աղյուսակում, մոնիթորինգի անցկացման ծրագիրը՝ աղյուսակ 12.2-ում, իսկ քարտեզ-սխեմաները նմուշառման կետերով և իրենց կոորդինատներով՝ հավելված 1-ում:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Աղյուսակ 12.3

Գործողություն	Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	նախատեսվող բնապահպանական միջոցառումը	Կատարող
Օդում փոշու պարունակության չափումներ	Փոշու արտանետումների 24 ժամյա ռեժիմով	Գործունեության ենթակա և հարակից տարածքում	ավտոմատ սարքով	տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ	Կապալառու, քաղաքապետարան
Աղմուկ	Աղմուկի մակարդակը	Հարակից տարածքում	Աղմուկ չափող սարքով	Շինտեխնիկայի շարժիչի աշխատանքի կարգավորում	Կապալառու
Թափոնների կուտակման տեղամասեր	Թափոնների պահումը և տեղափոխումը Ըստ հաստատված կանոնակարգի	Շինհրապարակ	Տեսողական զննում	Կուտակել միայն դրանց համար առաձնացված տեղերում	Կապալառու
Հողային աշխատանքներ	Հանված գրունտի ժամանակավոր պահեստ	Շինհրապարակ	Տեսողական զննում	Հանված գրունտերի ժամանակին հեռացում շինհրապարակից	Կապալառու, քաղաքապետարան
Շինարարական հրապարակ	Բարեկարգման աշխատանքներ	Շինարարական հրապարակ,	Արտաքին զննում	Հսկել գործընթացը , Բացառել շեղումները նախագծից	Կապալառու, Երևանի քաղաքապետարան
Կոմիտասի շուկայի շենքը	Հուշարձան	Կոմիտասի շուկայի շենքին հարող տարածք	Տեսողական զննում	Բացառել շենքի վնասումը և անվտանգության կանոնների խախտումը	Կապալառու

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
2. ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
3. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов. Новороссийск 1985
4. Нормативные показатели удельных выбросов вредных веществ в атмосферу. Харьков 1991г.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Ленинград, Гидрометеиздат, 1986г
6. Методика расчета выбросов вредных веществ в атмосферу при производстве асфальтбетона, Вильнэс 1985г
7. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:- «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007թ.
8. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы. Обнинск 1984г.
9. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն, «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ, 2022- 2023թթ., <http://armmonitoring.am>
10. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմեր» N 03-ն հրաման
11. «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգ
12. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
13. ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
14. ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:

15. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
16. [Www.arlis.am](http://www.arlis.am)
17. <http://meteomonitoring.am/page/1591>

ՀԱՎԵԼՎԱԾ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 1 փետրվարի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՔՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՋԻ ԹԻ ԲԻ ԹԱՈՒԵՐ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 53/10 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 30.09.2002թ 1-5082, Հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիր 02.12.2002թ 001842, Համայնքի ղեկավարի որոշում 23.12.2021թ 4560-Ա, 22.10.2024թ-ի կանոնադրություն

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0214-0292, 01-003-0214-0286

Մակերեսի չափը (հա)՝ 0.42146, 0.01655

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 15112024-01-0104, գաղտնաբառ՝ GUBA2WF2CZ7U

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Սույն վկայականը հանդիսանում է N 01022024-01-0055, գաղտնաբառ՝ THWSXF4DAUBK վկայականի ուղղված տարբերակը, 15.11.2024թ-ին կատարվել է անվանափոխման գրանցում:

Սեփականատերը 0.01655հա հողամասի նկատմամբ ունի 1/3 բաժնեմաս:

0.01655 հա հողամասը բաժնային սեփականություն է Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 53, Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 53/9 և Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 53/10 հասցեների համար:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր


ՎԿԱՅԱԿԱՆ N 15112024-01-0104, գաղտնաբառ՝ GUBA2WF2CZ7U

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



Երևան քաղաք
Արաբկիր վարչական շրջան
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 01-003-0214-0292,0286
Մասշտաբ 1:1000





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2024-11-06

«ՋԻ ԹԻ ԲԻ ԹԱՌԻԵՐ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 286.110.02592

Հիմնադրման տարի 1997

Գրանցման ամսաթիվ 1997-03-03

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ
գործունեության (գոյության) դադարման մասին պետական
միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 37325642

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 02544339

Սոցիալական վճարների պարտավորությունների
անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի
ծածկագիր) 43112592

Էլ. փոստ gor.mikayelyan@gtbkomitas.com

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ՊՈՌՇՅԱՆ Փ. / 12 ԱՐԱԲԿԻՐ 0019 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս --

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն ԳՈՐ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԱՐԵԳԻ

Անձնագրային տվյալներ AT0333988 2019-12-17 011

Հասցե ՄԱՇՏՈՑԻ Պ. / Ը / 45Ա / 54 ԲՆ. ԿԵՆՏՐՈՆ 0002
ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ



Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 50,000.00

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով
ՆՈՆՈ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԻ Անձնագիր h/h BA3040086 2016-12-09 տրվ. 011 ի կողմից ՀԾՀ 6112910902 Հասցե՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ Փ. / Տ / 37 ԱՐԱՐԱՏ 0607 ԱՐԱՐԱՏ ԱՐԱՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ	2022-09-05	100 %	50000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2000-12-08	Հիմնադիր փաստաթղթերի համապատասխանեցում ԶՕ դրույթներին
2002-01-03	Մասնակիցների փոփոխություն Մասնակիցների փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն) Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2008-11-25	Սեփականության վկայագրի տրամադրում
2008-12-04	Մասնակիցների փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում
2012-02-21	Կանոնադրության թվայնացում
2017-12-06	Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում
2019-09-02	Մասնակիցների փոփոխություն Մասնակիցների տվյալների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն) Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն
2020-02-10	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2022-05-16	Մասնակիցների փոփոխություն Մասնակիցների տվյալների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2022-09-05	Մասնակիցների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն) Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2022-12-30	Իրավաբանական հասցեի փոփոխություն Պաշտոնական կայքի և/կամ էլ. փոստի մասին տեղեկությունների գրառում




	Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)
2023-03-29	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում
2024-02-06	Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն
2024-03-08	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում
2024-11-06	Անվանման փոփոխություն Պաշտոնական կայքի և/կամ էլ. փոստի մասին տվյալների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)


Քաղվածքը տրամադրվում է

Ֆիդելիս_Սոնա Խորվաթիայի

Քաղվածքի տրամադրման ամսաթիվը

2024-11-06





Գլխավոր հատակագիծ



Հողամասի ընդհանուր մակերես	100.0 % - 4 380 մ ²
Շենքի կառուցապատման մակերեսը	30.9 % - 1 354 մ ²
Կանաչապատում	40.3 % - 1 765 մ ²
Ճանապարհներ և բարեկարգում	28.8 % - 1 261 մ ²

- Տարածքի սահմանագիծ
- Նախագծվող շենք
- Ճանապարհ
- Կանաչապատ տարածք
- Հետիոտնային ճանապարհ
- Ստորգետնյա ավտոկայանատեղիի եզրագիծ
- >-- Տրանսպորտային միջոցների շարժման հետագիծը
- ▲ Ընդհանուր տարածքի մուտք / ելք
- ▲ Բնակելի հատվածի մուտք / ելք
- ▲ Հասարակական տարածքի մուտք / ելք
- ▲ Ստորգետնյա ավտոկայանատեղիի մուտք / ելք

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Տ. ԱՎԻՆՅԱՆ

STORAKET
ARCHITECTURAL
STUDIO
EVN | MSK | MTL

ՆԱԽԱԳԾՈՂ ԱՐԿԻՏԵԿՏԱՐՆԵՐ՝
"ԿԵՏ ԱՐԿԻՏԵԿՏ" ՓԲԸ
ՀՀ, Երևան, Գործյան փող. 1-ին շենք,
բնակարան 9
ԼՍՑԵԼՈՒԱՅԻ ՊԱՍՏՈՂ՝ 11424
Ֆեք: +374 010 528531
info@storaket.com
www.storaket.am

Ներկայացված բոլոր նյութերը, համարվում են Ստորագրված ճարտարապետական արվեստանոցի հեղինակային աշխատանք և չի բույսադրվում օգտագործել այն առանց նախապես գրավոր համաձայնությունը ընձեռնության հետ (Copyright 2007 KET ARCHITECT).

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԷՍԶԻՋԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ
ՆԱԽԱԳԾԻ ՊԱՅԵ՝ 22 ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԿՈՄԻՏԱՍ 53/10
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ «ՅՈՒՆԻՈՒՆ-ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ

ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 0.00 ՆԻՇՈՒՄ

ԱՄՍԱԹԻՎ՝ 27.09.2024 ՄԱՍԵՏԱՐ՝ 1 : 400

ԳԾԱԳՐԻ
ՊԱՍՏՈՂ

Ճ012

A3